

ծանրագոյն պատուհասիւք ի բանաս, ի տանջանս, ի գելարանս»։ Երբ ուրեմն տեսնում է որ ոչ «թշուառացուցիչ գաւազանք», ոչ իսկ բանտերը, տանջարաններն ու գելարանները ի վիճակի են ժողովուրդի միջից բռնի սյծով արմատախիլ անելու հին հաւատքը եւ հայրերից ժառանգած հասկացողութիւնները, նախանձայնով Մեսրոպ Մաշտոց՝ քրիստոնէական կրօնի հանդէպ տածած իր անչափ եռանդից տարուած՝ դիմում է աւելի ծայրայեղ միջոցների. «Պորտակեալս, ապա խանձեալս, մրեալս եւ զունակ զունակ խայտառակեալս, եւ յաշխարհէն կորցէին»։

Այսինքն՝ երբ տեսնում են որ հին հաւատքին հաւատարիմ մնացած մարդիկ ոչ խօսքի սյծով են դարձի գալիս, եւ ոչ իսկ «թշուառացուցիչ գաւազանի» եւ «ծանրագոյն պատուհասների» վախից, պարզապէս հրամայում են՝ այդպէսներին «կորզել յաշխարհէն», մահու մատնել նրանց՝ խանձելով, մուր դարձնելով ողջ-ողջ, այլ եւ «զունակ զունակ խայտառակեալս»։ Եւ այդ բանում քրիստոնէութեան առաքեալին մեծապէս աջակցում է երկրի աշխարհիկ պետը՝ «բաջն Սիսական Վասակ՝ այլ խորհրդական եւ հանճարեղ եւ յառաջիմաց, շնորհատուր իմաստութեան Աստուծոյ»։ Այն Վասակ Սիւնին, որ քիչ տարիներ յետոյ՝ բոլորովին այլ դերում հանդէս պիտի գար։

Եւ այսպէս, հայ գրերի հանճարեղ հնարիչը, հայ զբաղանութեան հիմնադիրը, հայոց պատմութեան ամենամեծ դէմքը՝ միւսնոյն ժամանակ կրօնական հալածանքներ կաղմակերպողի դերում։ Եւ դեռ պնդողներ կան, թէ հայոց եկեղեցու պատմութեանը բոլորովին անձանօթ է հալածանքը՝ ընդդէմ այլադաւաններին։ Կորիւն — եւ ուրիշներ — այլ բան է պատմում մեզ, հարկաւ իրբեւ գերագոյն առաքելութեան վկայական իր ուսուցչի մասին։

Բայց ինչո՞ւ զարմանալ այդ բանի վրայ, երբ 20-րդ դարում անգամ՝ անյայտ բան չեն նման հալածանքները։ Բայց Կորիւն զոնէ այդչափ ժլատ չլինէր իր նկարագրութիւնների մէջ, մեզ մի փոքր աւելի տեղեկութիւններ տուած լինէր հալածանքների ենթակայ բնակչութեան կրօնական հաւատալիքների եւ «ճիւղական

կենցաղավի», այլ եւ «խեցբեկագոյն լեզուի» մասին։

Իսկ ի՞նչ պէտք է հասկանալ Կորիւնի «Մարաց կողմերը» խօսքի տակ։ Նոյն կապակցութեան մէջ յիշատակուած Սիւնիքը կամ Սիսականը հանրածանօթ է արդէն։ Անտարակոյս է նաեւ, որ «Մարաց կողմերը», ուրիշ խօսքով՝ Մարաց երկրամասը կամ գաւառը, Սիւնիքի անմիջական հարեւանութեան մէջ որոնելու է, մինչեւ իսկ իրբեւ վերջինիս մասերից մէկը։

Գեռ Փաւստոս Բուզանդ եւ Ագաթանգեղոս՝ քանիցս յիշատակում են «ամուր աշխարհն (երկիրն) Մարաց», իսկ Մովսէս Պորենացին՝ շատ աւելի անդամներ։ Այսպէս, Տիգրանի եւ Աթղահակի (առասպելախան) պատմութիւնը անելիս՝ Պորենացին (Ա. 30) ասում է թէ Տիգրան «գԱնոյշ, զառաջին կրին Աթղահակայ, եւ զբաղումս ի սերմանէն Աթղահակայ աղջկունս, հանդերձ պատանեկօք եւ բազմութեամբ գերեացն, որչափ թէ աւելի քան զբլեր մի, բնակեցուցանէ յարեւելիայ ուսոյ մեծի լերինն մինչեւ ի սահմանս Գողթան»... Եւ քիչ յետոյ, նոյն գլխում. «... Պաշտօնեայ տայ Անուշայ ի նոյն Մարաց, որ առ ոտամբ լերինն բնակեցան»։

Այսինքն՝ Տիգրան բազմաթիւ մարացի դերներ է բերում (Աթղահակի սերունդից) եւ բնակեցնում Հայաստան, մեծ լերան՝ Մասիսի արեւելեան ստորոտներում, «մինչեւ Գողթան... մինչեւ հանդէպ ամբոցին Նախճաւանու»։ Այդ կապակցութեան մէջ Պորենացին յիշատակում է աշխարհագրական մի քանի վայրեր եւս, «Մարաց» պատկանող, որոնք զարձեալ նոյն կողմերն են, ինչպէս օրինակ՝ Ջուղան, Արաքսի ափին։ Եւ զարձեալ, նոյն այդ գլխի մէջ կարդում ենք, որ Ծարուրը եւս «Մարաց աշխարհի» մաս է եղել։

Առանց անդրադառնալ կամենալու Պորենացու հազորգած տեղեկութեանց զուտ պատմական արժէքին, այսչափս պարզ է բոլոր պարզաներում, որ Պորենացու օրով, եւ դեռ շատ աւելի վաղ, Հայաստանի որոշ երկրաբամասեր «Մարաց աշխարհ» անուան տակ են ծանօթ եղել Հայոց մէջ։ Եւ այդ երկրամասը տարածուելիս է եղել Մասիսից արեւելք, մինչեւ Գողթան գաւառը, մէջն առնելով նաեւ Ծարուրը,